

**Ե.13.00 - ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ, ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ ԵՎ
ԱՎՏՈՄԱՏԱՑՈՒՄ**

**Ե.13.01 – ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ
ՏԱՐԻԵՐԸ**

1. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Կառավարման համակարգերը և կառավարման սկզբունքները: Դինամիկ համակարգերի (մեխանիկական, էլեկտրական, էլեկտրամեխանիկական, կենսաբժշկական, տեխնոլոգիական գործընթացներ և այլ) մոդելավորումը: Գծային և ոչ գծային համակարգերի մոդելները, փոխանցման և անցողիկ ֆունկցիաները, հաճախականային բնութագրերը, կառուցվածքային սխեմաները և դրանց ձևափոխումները: Վիճակի փոփոխականների օգտագործումը: Փոփոխական, բաշխված պարամետրերով, դետերմինացված, ստոխաստիկ և դիսկրետ ժամանակով մոդելներ: Կառավարման համակարգերի կառավարելիությունը: Կառավարելիության հիմնախնդիրը: Գծային ստացիոնար և ոչ ստացիոնար համակարգերի լրիվ կառավարելիության հանրահաշվական չափանիշները: Կառավարման համակարգերի դիտելիությունը, դիտելիության հիմնախնդիրը: Գծային ստացիոնար և ոչ ստացիոնար համակարգերի լրիվ դիտելիության հանրահաշվական չափանիշները: Կառավարման համակարգերի կայունությունը: Հիմնարար հասկացություններ կայունության մասին: Կայունությունն ըստ Լյապունովի:

2. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

Կառավարման համակարգերի հետազոտման հիմնական մեթոդները: Անընդհատ և դիսկրետ գծային համակարգեր: Ստատիկական և դինամիկական նկարագրող հավասարումները, հավասարումների գծայնացումը: Լապլասի և Ֆուրյեի ձևափոխությունների կիրառումը համակարգերի

հետազոտման համար: Համակարգերի կայունության հետազոտումը: Լյապունովի թեորեմները կայուն շարժման մասին ըստ առաջին մոտավորության: Կայունության պայմաններն ըստ բնութագրիչ հավասարման արմատների բաշխման: Կայունության հանրահաշվական և հաճախականային չափանիշները: Կառավարման համակարգերի դինամիկ մոդելավորման ժամանակակից համակարգչային փաթեթները: Կառավարման որակի հետազոտումը: Կառավարման որակի հետազոտման ուղղակի և անուղղակի մեթոդները: Հաստատված ռեժիմի որակի գնահատումը: Կառավարման որակի գնահատման ինտեգրալային, արմատային, հաճախականային չափանիշները: Կառավարման համակարգերի զգայունությունը: Կառավարման համակարգերի սինթեզը: Կառավարման համակարգերի ճշգրտումը: Ճշգրտող օղակներ, դրանց տեսակները և հատկությունները: Ճշգրտող օղակների սինթեզն ըստ արմատների հետագծերի և հաճախականային բնութագրերի: Կառավարման համակարգերի նախագծումը Matlab փաթեթի կիրառմամբ: Համեմատական ինտեգրողիֆերենցող (C^1) կարգավորիչներ:

Ոչ գծային համակարգեր: Ոչ գծային համակարգերի տեսակները և օղակների բնութագրերը: Ֆազային տարածություն և հարթություն: Կառավարման գործընթացների նկարագրումը ֆազային հարթության վրա: Ինքնատատանումները և դրանց հետազոտումը ֆազային հարթությունում: Կայունության հասկացությունը ոչ գծային համակարգերում: Լյապունովի երկրորդ մեթոդը: Բացարձակ կայունության հասկացությունը և կիրառումը համակարգերի հետազոտման համար: Բացարձակ կայունության հաճախականային տարբերակը: Հարմոնիկ գծայնացման մեթոդը և դրա կիրառումը համակարգերի կայունության հետազոտման համար: Ոչ գծային համակարգերի մոդելավորումը Simulink փաթեթի օգնությամբ: Անցումային գործընթացների կառուցման և որակի գնահատման մեթոդները: Ոչ գծային համակարգերի սինթեզը: Հաճախականային մեթոդների

կիրառումը: Համակարգերի սինթեզը Վ.Մ.Պոպովի բացարձակ կայունության հաճախականային և հարմոնիկ գծայացման մեթոդների կիրառմամբ:

Պատահական գործընթացները կառավարման համակարգերում: Պատահական գործընթացները և դրանց հիմնական վիճակագրական բնութագրերը: Պատահական գործընթացների կորելյացիոն ֆունկցիաները, սպեկտրալ խտությունները և դրանց հիմնական հատկությունները: Պատահական ազդանշանների անցումը գծային համակարգերում: Գծային համակարգերի մուտքում և ելքում տեղի ունեցող պատահական գործընթացների կորելյացիոն ֆունկցիաների ու սպեկտրալ խտությունների կապը: Նվազագույն միջին քառակուսային սխալով գծային համակարգերի սինթեզը:

Օպտիմալ և ինքնահարմարվող համակարգեր: Դասական վարիացիոն հաշիվը: Էյլերի հավասարումները: Օպտիմումի անհրաժեշտ և բավարար պայմանները: Օպտիմալ կառավարման խնդրի դրվածքը, երկրաչափական և ֆիզիկական իմաստները: Առավելագույն արագագործության խնդիրը: Ֆելդբաումի n – միջակայքերի թեորեմը: Պոնտրյագինի մաքսիմումի սկզբունքը սովորական և ֆազային սահմանափակումներով խնդիրների համար: Դինամիկ ծրագրավորման մեթոդը: Օպտիմալության սկզբունքը և դինամիկ ծրագրավորման ալգորիթմը: Բելմանի հավասարումների արտաձումը: Ինքնահարմարվող և ինքնակարգաբերվող համակարգեր, դրանց կառուցման սկզբունքները: Էքստրեմումի փնտրման մեթոդները:

3. ԲԱԶՄԱԶԱՓ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ (ԲԿՀ)

Մաթեմատիկական հիմունքները: Վեկտորական տարածություն: Մատրիցներ և որոշիչներ: Սեփական թվեր, վեկտորներ և դիադային տրոհում: Մատրիցներ և մատրիցանշանակ ֆունկցիաներ: Մատրիցային նորմեր և սինգուլյար թվեր: ԲԿՀ-երի տեսակները և կառուցվածքը: Գծային ԲԿՀ-երի նկարագրության եղանակները: Բնութագրիչ փոխանցման ֆունկցիա-

ների մեթոդը: ԲԿՀ-երի կայունության հաճախականային չափանիշները: Նայքվիստի կայունության չափանիշի բազմաչափ նմանակը: Անորոշությունների նկարագրումը: Կայունության պայմանը մուլտիպլիկատիվ անորոշության դեպքում: Գծային ԲԿՀ-երի կայունության պաշարներն ըստ ամպլիտուդի և ֆազի: Գլխավոր փոխանցման ֆունկցիաների և ուղղությունների մեթոդը: ԲԿՀ-երի նկարագրումը գլխավոր փոխանցման ֆունկցիաների և ուղղությունների մեթոդի հիման վրա: Ռոբաստ ԲԿՀ-երի անալիզը անորոշությունների պայմաններում: Ռոբաստ ԲԿՀ-երի սինթեզը:

4. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏԱՐԵՐԸ

Չափիչ սարքեր և համակարգեր: Չափումների սխալները, չափումների արդյունքների մշակումը: Չափման միջոցների սխալները, դրանց նորմավորումը, հիմնական չափագիտական բնութագրերը: Նորմավորող կերպափոխիչներ, անալոգաթվային կերպափոխիչներ: Էլեկտրամեխանիկական սարքեր և դրանց օգտագործման առանձնահատկությունները: Թվային չափիչ սարքերի կառուցման սկզբունքները և հիմնական բնութագրերը: Կառավարման համակարգերի էլեկտրոնային սարքեր, ինտեգրալային օպերացիոն ուժեղացուցիչներ:

Թվաանալոգային և անալոգաթվային ձևափոխիչներ:

Հաստատուն հոսանքի էլեկտրաշարժիչներ:

Փոփոխական հոսանքի (սինքրոն և ասինքրոն) էլեկտրաշարժիչներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կյուրեղյան Ս.Գ., Աբգարյան Ս.Վ. MATLAB փաթեթի կիրառումը կառավարման համակարգերի հաշվողական խնդիրներում: -Եր.: ՀՊՃՀ, 2006. -18էջ:
2. Ղարսլյան Է. Վ., Ալեքսանդրյան Վ. Գ., Սիմոնյան Ս. Հ. Բազմակապ ԱԿՀ-երի անալիզի և սինթեզի հաճախականային մեթոդներ /Ուսումնական ձեռնարկ: - Երևան, ԵրՊի 1990. -113 էջ:

3. Միմոնյան Ս.Հ. Օպտիմալ կառավարման կիրառական տեսություն /Ուսումնական ձեռնարկ: Երևան, ՀՊՃՀ, 2005.-180 էջ:
4. Վարդանյան Ն.Հ., Գասպարյան Օ.Ն. Արմատային հետազդերի մեթոդի կիրառությունը ավտոմատ կառավարման համակարգերում: - Երևան: ՀՊՃՀ, 2012.-30 էջ:
5. Бесекерский В.А., Попов Е.П. Теория систем автоматического регулирования. – СПб., 2003. -753 с.
6. Брайсон А., Хо Ю-Ши. Прикладная теория оптимального управления. - М.: Мир, 1972. -544с.
7. Гантмахер Ф.Р. Теория матриц. - М.: Физматлит, 2004. - 560 с.
8. Гаспарян О. Н. Теория многосвязных систем автоматического регулирования. - Ереван: Асогик , 2010. - 380 с.
9. Дорф Р., Бишоп Р. Современные системы управления. -М.: Лаборатория базовых знаний, 2002. -832с.
10. Дьяконов. В. MATLAB 6.5 SP1/7 и Simulink 5/6. Основы применения. - М., Солон-Пресс, 2005.-92с.
11. Егоров А.И. Основы теории управления.- М.: Физматлит, 2004.– 504 с.
12. Ким Д.П. Теория автоматического управления. Т1. Линейные системы. -М.: Физматлит, 2007. – 312 с.
13. Ким Д.П. Теория автоматического управления. Т2. Многомерные, нелинейные, оптимальные и адаптивные системы.- М.:Физматлит, 2004.– 464 с.
14. Поляк Б.Т., Щербаков П.С. Робастная устойчивость и управление. -М.: Наука – 2002,-303 с.
15. Gasparyan O.N., Linear and Nonlinear Multivariable Feedback Control: A Classical Approach, John Wiley & Sons Ltd., Chichester, Sussex, UK, 2008. -361p.
16. State Flow Getting Started. MathWorks Inc., 2013. -129p.
17. Using MATLAB. The MathWorks, Inc, 2014. -865p.

Ե.13.02 - ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

1. ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կառավարում, կառավարման համակարգեր, ավտոմատացված կառավարման համակարգեր, դրանց դասակարգումը, կառուցման հիմնական սկզբունքները, փուլերը, ապահովումներն ու ենթահամակարգերը: Համակարգային մոտեցում: Համակարգային մոտեցման սկզբունքները: Համակարգատեխնիկայի հիմնական հասկացությունները:

Նախագծման գործընթացի կառուցվածքը: Նախագծման հիերարխիկ կառուցվածքը և մակարդակները: Նախագծման փուլերը: Նախագծման ավտոմատացման ժամանակ օգտագործվող մոդելների և պարամետրերի դասակարգումը: Տիպային նախագծային ընթացակարգերը: Ավտոմատացված նախագծման համակարգեր և դրանց տեղն այլ ավտոմատացման համակարգերում: Ավտոմատացված նախագծման համակարգերի կառուցվածքը, տարատեսակները: CAE, CAD, CAM համակարգերը, բնութագրերը: CALS տեխնոլոգիան:

Համալիր ավտոմատացված համակարգեր: Կառավարման համակարգերը համալիր ավտոմատացված համակարգերի կազմում: Գործավարության ավտոմատացված համակարգեր:

2. ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Տեխնիկական ապահովման կառուցվածքը, դրան ներկայացվող պահանջները: Ավտոմատացման համակարգերի աշխատանքային տեղերի սարքավորումները: Քոմպիյութերային համակարգերը ավտոմատացման համակարգերում: Վերջույթային սարքավորումներ (տերմինալներ): Տեխնոլոգիական գործընթացների կառավարման ավտոմատացված համակարգերի տեխնիկական միջոցների առանձնահատկությունները: Գրաֆիկական վերջույթային սարքավորումներ:

Համակարգչային ցանցեր: Լոկալ և գլոբալ համակարգչային ցանցեր: Ethernet լոկալ հաշվողական ցանցերը և դրանց տարատեսակները: Սարքավորումների բաղադրակազմը: Օղակաձև տոպոլոգիայով ցանցեր: Token Ring ցանցը: FDDI ցանցը: Տվյալների հաղորդումը կորպորատիվ

ցանցերում: Տվյալների հաղորդման կապուղիների բնութագրերը և տեսակները: Ռադիոկապուղիներ, անալոգային, թվային կապուղիներ: Երկկողմ կապի կազմակերպումը: Արձանագրությունների ստեկները և ցանցերի տեսակները ավտոմատացված համակարգերում: TCP արձանագրությունը: IP արձանագրությունը: Հասցեականացումը TCP/IP-ում: X.25 և Frame Relay ցանցերը: ATM ցանցերը: Ցանցային կոմուտացման սարքավորումները: Ամպային տեխնոլոգիաներ: Վիրտուալացում: Վիրտուալացման ավտոմատացման համակարգեր:

3. ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՆԱԼԻԶԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Մաթեմատիկական ապահովման բաղադրիչները: Տարբեր հիերարխիկ մակարդակների մոդելների մաթեմատիկական ապարատը: Մաթեմատիկական մոդելների նախնական հավասարումները: Տոպոլոգիական հավասարումները: Համակարգերի մաթեմատիկական մոդելների բնութագրերը: Ամտոմատացման համակարգերի մաթեմատիկական ապահովման թվային մեթոդներին ներկայացվող պահանջները: Մաթեմատիկական մոդելների ձևավորման ընթացակարգերը: Անալիզի մեթոդները և ալգորիթմները մակրոմակարդակում: Մաթեմատիկական մոդելները մակրոմակարդակում: Գծային հանրահաշվական հավասարումների համակարգերի լուծման թվային եղանակները: Ոչ գծային հանրահաշվական հավասարումների համակարգերի լուծման թվային եղանակները: Սովորական դիֆերենցիալ հավասարումների համակարգերի լուծման թվային եղանակները: Միատարբերակային և բազմատարբերակային վերլուծություն: Անալիզի մեթոդները և ալգորիթմները միկրոմակարդակում (վերջավոր տարբերությունների և վերջավոր տարրերի մեթոդները): Մաթեմատիկական մոդելները միկրոմակարդակում:

Անալիզի մաթեմատիկական ապահովումը ֆունկցիոնալ-տրամաբանական մակարդակում: Անալոգային սարքավորումների մոդելավորումը և

անալիզը: Դիսկրետ սարքավորումների մաթեմատիկական մոդելները: Տրամաբանական մոդելավորման մեթոդները: Անալիզի մաթեմատիկական ապահովումը համակարգային մակարդակում:

Զանգվածային սպասարկման տեսությունը: Զանգվածային սպասարկման համակարգերի անալիտիկ մոդելները: Զանգվածային սպասարկման համակարգերի իմիտացիոն մոդելավորումը: Տեղեկություններ իմիտացիոն մոդելավորման GPSS (General Purpose Simulation System) լեզվի մասին:

Մեքենայական գրաֆիկայի և երկրաչափական մոդելավորման ենթահամակարգերի մաթեմատիկական ապահովումը: Երկրաչափական մոդելներ: Մեքենայական գրաֆիկայի մեթոդները և ալգորիթմները: Ավտոմատացման համակարգերում տվյալների հավաքման և մշակման համակարգերը, վերլուծության, հետազոտման և օպտիմալացման եղանակները:

4. ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԻՆԹԵԶԻ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՊՐԱՆՈՎՈՒՄԸ

Պարամետրական սինթեզի խնդրի դրվածքը: Սինթեզի ընթացակարգերի տեղը նախագծման մեջ: Օպտիմալության չափանիշները: Օպտիմալության մեթոդները: Մաթեմատիկական ծրագրավորման խնդիրների և լուծման եղանակների դասակարգումը: Միաչափ օպտիմալացման մեթոդները: Ոչ պայմանական օպտիմալացման մեթոդները: Էքստրեմումի անհրաժեշտ պայմանները: Պայմանական էքստրեմումի փնտրման մեթոդները: Պարամետրական օպտիմալացում: Բազմաչափանիշային օպտիմալացման խնդիրներ և դրանց լուծման եղանակները: Օպտիմալ կառավարում: Կառուցվածքային սինթեզի խնդիրները: Նախագծային լուծումների սինթեզի ընթացակարգերը:

Կառուցվածքային սինթեզի մեթոդները: Արհեստական բանականության համակարգեր: Դիսկրետ մաթեմատիկական ծրագրավորում:

Բարդության տեսության տարրերը:

Օպտիմալ լուծումների փնտրումը գենետիկական ալգորիթմների միջոցով: Գենետիկական ալգորիթմների տարատեսակները:

Ավտոմատացման համակարգերի հատուկ մաթեմատիկական ապահովման, կիրառական ծրագրերի փաթեթների, տիպային մոդելների սինթեզման մեթոդները:

5. ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈՂՆԵՐԸ

Վճիռների կայացման խնդիրները, դրանց դասակարգումը և լուծման փուլերը: Փորձագիտական ընթացակարգեր: Այլընտրանքների բազմաչափանիշային գնահատման եղանակները: Փոխզիջումների և համաձայնության բազմություններն ու դրանց կառուցումը: Օգտակարության ֆունկցիան: Վճիռների կայացումը անորոշության պայմաններում: Անորոշության տեսակները: Բայեսի, Գերմեյերի, Վալդայի, Սևիջի, Հուրվիցի չափանիշները:

Ոչ հստակ բազմություններ: Հիմնական հասկացությունները: Ոչ հստակ մոդելավորում: Մաթեմատիկական ծրագրավորման խնդիրները ոչ հստակ մուտքային պայմանների դեպքում և օպտիմալության տարբեր սկզբունքների հիման վրա: Ոչ հստակ հարաբերակցություններ: Վճիռների կայացումը նախապատվությունների ոչ հստակ հարաբերակցությունների դեպքում՝ այլընտրանքների բազմության կիրառմամբ:

Բանական համակարգեր: Ոչ հստակ հարմարվող կառավարում: Ոչ հստակ կարգավորիչներով ավտոմատացման համակարգերի սինթեզման մեթոդները: Կառավարման բազմաչափանիշային խնդիրները:

6. ՄՈՂԵԼԱՎՈՐՈՒՄ

Մոդելավորման նպատակները և մոդելավորման մեթոդի առավելությունները: Մաթեմատիկական մոդելներ: Նմանակային և ֆիզիկական մոդելներ: Ֆունկցիոնալ մոդելավորում (Function Modeling Method): Ինֆորմացիոն մոդելավորում (Information and Data Modeling Methods): Վարքագծային մոդելավորում (Simulation Modeling Method): Գործընթացների

մոդելավորում (Process Flow and Object State Description Capture Method):
Օբյեկտային կողմնորոշմամբ նախագծում (Object-Oriented Design Method):

7. ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Համակարգերի տեղեկատվական ապահովումը: Տեղեկատվական համակարգեր: Համակարգերի տեղեկատվական մոդելը: Տեղեկատվական ապահովման համակարգի ենթահամակարգերը: Տեղեկատվական համակարգերի վերլուծության ծրագրային միջավայրերը:

Տվյալների բազաների կառուցման և օգտագործման հիմունքները:

Տվյալների բազաներին ներկայացվող պահանջները: Տվյալների բազաների կառավարման համակարգերը: Տվյալների բազաների ստեղծման սկզբունքները: Տվյալների բազաների կառուցվածքների տեսակները. հիերարխիկ, ցանցային, ռեյացիոն, NoSQL կառուցվածքներ:

Հարցումների կազմակերպումը տվյալների բազաներում: Տվյալների ներկայացման մակարդակները: Տվյալների բազաների նախագծման խնդիրները: Տվյալների բազաների նախագծման գործընթացը: Նախագծման մեթոդաբանություն: Տվյալների բազաների նախագծման հիմնական փուլերը: Նախագծմանը ներկայացվող պահանջները (ամբողջականություն, համաձայնեցվածություն, վերականգնողականություն, անվտանգություն, արդյունավետություն): Տվյալների բազաներին ներկայացվող պահանջների ձևավորման և վերլուծության փուլերը: Կոնցեպտուալ նախագծում:

Մեծածավալ տվյալներ (BigData). հիմնական առանձնահատկությունները, ճարտարապետությունը, տվյալների տիպերը, հարցումների կազմակերպումը, տվյալների հավաքագրումը, կրկնօրինակումը, բազմացումն ու բաժանումը: Մեծածավալ տվյալների բազաներ, դրանց ստեղծման անհրաժեշտությունը, տարբերակները, առավելություններն ու թերությունները, կառավարման համակարգերը:

8. ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԵՐԸ ԵՎ ԾՐԱԳՐԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԸ

Ծրագրավորման լեզուներ, դրանց դասակարգումը և առանձնահատկությունները: Օպերացիոն համակարգեր, դրանց հիմնական ֆունկցիաներն ու առանձնահատկությունները: Զուգահեռ ծրագրավորման սկզբունքները: Ցանցային ծրագրային ապահովում, ֆունկցիաները: Ցանցային օպերացիոն համակարգերի ֆունկցիաները և բնութագրերը: Բաշխված համակարգեր: Կիրառական արձանագրություններ և հեռահաղոդակցական տեղեկատվական ծառայություններ: Տեղեկատվական անվտանգություն: Ավտոմատացման համակարգերի համակարգային միջավայրերը, դրանց նշանակությունն ու կազմը:

Ծրագրավորման համակարգերը և դրանց տիպային բաղադրիչները՝ լեզուներ, թարգմանիչ ծրագրեր, կապի խմբագիրներ, տեքստային խմբագիրներ: MPI հիմնօրինակ:

Ավտոմատացման համակարգերի ծրագրային ապահովումը, ինտեգրման եղանակները: DDE (Dynamic Data Exchange) և OLE (Object Linking and Embedding) տիպերի ծրագրային ապահովման ինտեգրացման տեխնոլոգիաները: Տվյալների կառավարումն ավտոմատացման համակարգերում և ավտոմատացված համակարգերի ցանցերում: Տվյալների բազաների բանական սերվերներ: Տվյալների բաշխված բազաներ: Նախագծման գործընթացի կառավարման ծրագրային միջոցները ավտոմատացման համակարգերում:

Ծրագրային ապահովման մշակման գործիքային միջավայրերը: Հավելվածների մշակման միջավայրերը: Ուղղորդված տեխնոլոգիաներ: Մաթեմատիկական կառույցների (մատրիցների, վերջավոր գրաֆներ և այլն) ծրագրավորումը: Տվյալների, ֆայլերի ծրագրային մշակման եղանակները:

9. ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՄԵԹՈՂԻԿԱՆԵՐԸ

Ավտոմատացված համակարգերի նախագծման առանձնահատկությունները, փուլերը: Կորպորատիվ ցանցերի նախագծման առանձնահատկությունները: Բաց ավտոմատացված համակարգեր: Կոնցեպտուալ նախագծման գործիքային միջոցները՝ CASE (Computer Aided System Engineering) համակարգեր: Զուգահեռ նախագծման տեխնոլոգիան: SADT (Structured Analysis and Design Technique) մեթոդիկան: IDEF0 (Integrated DEFinition) և IDEF3 մեթոդիկաները (վարքագծային նախագծում): IDEF4 (օբյեկտա-կողմնորոշված) մեթոդիկան: Մոդելավորման (UML) ունիֆիկացված լեզուն: CDIF (CASE Data Interchange Format) մետամոդելները և ստանդարտները: STEP (Standart for Exchange of Product data) տեխնոլոգիաներ, ստանդարտների կառուցվածքը, նկարագրման, իրացման եղանակները, տեղեկատվական փոխանակումների կազմակերպումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բալասանյան Ա.Շ. Համակարգերի մոդելավորում/ Դասագիրք: - Երևան, Ճարտարագետ, 2010.- 289 էջ:
2. Սիմոնյան Ա.Հ. Հաշվողական մեթոդների կիրառական տեսություն: - Երևան, ՀՊՃՀ, 2009. – 204 էջ:
3. Бусленко Н.П. Моделирование сложных систем. М.: Н., 2005. - 340 с.
4. Гаскаров Д.В. Интеллектуальные информационные системы. - М.: Высшая школа, 2003.-431с.
5. Дейт Д.К. Введение в системы баз данных. 8-е изд. М.: Вильямс, 2006. - 1328 с.
6. Емельянов В.В., Ясиновский С.И. Имитационное моделирование систем, - М.: МГТУ им. Н.Э. Баумана, 2009.-584с.
7. Кузнецов Н.А., Кульба В.В., Ковалевский С.С., Косяченко С.А. Методы анализа и синтеза модульных информационно-управляющих систем. -М.: Физмэт-лит, 2002. – 800 с.
8. Ларичев О.И. Теория и методы принятия решений. Университетская книга, Логос, 2006. 392 с.

9. Мартемьянов Ю.Ф., Лазарева Т.Я. Экспертные методы принятия решений: Учеб. пособие. - Тамбов: ТГТУ, 2010. – 80 с.
10. Норенков И.П. Основы автоматизированного проектирования. М.: МГТУ Н.Э. Баумана. 2002.-336с.
11. Норман Р. Дрейпер, Гарри Смит. Прикладной регрессионный анализ. Вильямс, Диалектика, 2007.-912с.
12. Павленко А.И. Системный анализ и компьютерная поддержка решений. - М.: МАИ, 2011.- 156с.
13. Петров В.Н. Информационные системы. - СПб.: Питер, 2003. -688с.
14. Романов О.Т., Маткин М.Н. Модели и алгоритмы автоматизированных систем обработки информации и управления. - М.: МАИ, 2010. - 159 с.
15. Смит Дж. Сопряжение компьютеров с внешними устройствами: Пер.с.англ. - М.: Мир, 2000. -377 с.
16. Советов Б.Я., Яковлев С.А. Моделирование систем. М.: Высшая школа, 2009.-344 с.
17. Таха, Хемди А. Введение в исследование операций, 7-е издание/ Пер. с англ. - М.: Вильямс, 2005. - 912 с.
18. Томас К.Х. Алгоритмы: построение и анализ. М.:Вильямс, 2005. - 1296с.
19. Хахулин Г.Ф., Красовская М.А., Булыгин В.С. Теоретические основы автоматизированного управления (Задачи, методы, алгоритмы теории оптимального планирования и управления.) - М.: МАИ, 2005.- 377с.
20. Шубин В.И., Красильников О.С. Беспроводные сети передачи данных: учебное пособие. –М.: Вузовская книга, 2012. -104с.
21. Меньков А.В., Острейковский В.А. Теоретические основы автоматизированного управления. –М.: Оникс-Лит. – 2007. 639с.
22. Мамаев Е., Шкарина Л. SQL Server 2000 для профессионалов. – М.: Питер. 2001. - 1083с.
23. Grolinger K., Higashino W.A., Tiwari A., Capretz M.A.M.. Data management in cloud environments: NoSQL and NewSQL data stores. JoCCASA, Springer. -2013.
24. Jure Leskovec, Anand Rajaraman, Jeffrey D. Ullman Mining of massive datasets. Cambridge University Press. - 2014.

25. Viktor Mayer-Schönberger; Kenneth Cukier. Big Data: A Revolution that Will Transform how We Live, Work, and Think. Houghton Mifflin Harcourt. -2013.
26. Thomas Erl, Ricardo Puttini Cloud Computing: Concepts, Technology & Architecture. - 2013
27. Igor Faynberg, Hui-Lan Lu, Dor Skuler. Cloud Computing: Business Trends and Technologies 1-st Edition, - 2016.
28. Nelson Ruest, Danielle Ruest. Virtualization, A Beginner's Guide 1-st Edition. – 2015.

**Ե.13.03 - ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ, ՀԱՄԱԼԻՐՆԵՐ,
ՀԱՄԱԿԱՐԳԵՐ, ՑԱՆՑԵՐ, ԴՐԱՆՑ ՏԱՐԻԵՐԸ ԵՎ
ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ**

1. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հաշվողական տեխնիկայի միջոցների զարգացման պատմությունը և հայ գիտնականների ավանդը այդ բնագավառի զարգացման գործում: Հաշվողական տեխնիկայի զարգացման փուլերը՝ էլեմենտային բազան, ճարտարապետությունը, ծրագրային ապահովումը: Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր և ցանցեր հասկացությունները: Ըստ Ֆոն-Նեյմանի կազմակերպմամբ հաշվողական մեքենաների կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը: Հիշողությունում ծրագրի պահպանման սկզբունքը: Ծրագրավորման կառավարման սկզբունքը: Երկուական կոդավորման սկզբունքը: Հասցեավորման եղանակները: Հաշվողական մեքենաների պրոցեսորի աշխատանքի ալգորիթմը: Կիսահաղորդչային տարրերը, սարքավորումները և սարքերը, դրանց հիմնական բնութագրերը և աշխատանքի սկզբունքը: ԿՄՕԿ տեխնոլոգիայի հիմնական բնութագրերը, առանձնահատկությունները և կիրառման ոլորտները: Ուղղահայաց փականով ՄՕԿ տրանզիստորներ: Ամբողջ թվերի ներկայացումը համակարգիչներում: Բացասական թվերի ներկայացումը: Թվերի

ներկայացման միջակայքը: Սահող ստորակետով թվերի ներկայացումը: IEEE 754 (half-, single-, double-, quad precision, extended precision) ստանդարտները: Թվերի ներկայացման միջակայքը: Հատուկ թվային արժեքներ: Բուլյան ֆունկցիաները և դրանց ներկայացման եղանակները: Մինիմալացման մեթոդները: Կոմբինացիոն սխեմաների վերլուծությունը և սինթեզը: Վերջավոր ավտոմատի հասկացությունը: Ավտոմատների վիճակների մինիմացումը: Ավտոմատի կառուցվածքային սինթեզի փուլերը: Ավտոմատների վերլուծությունը:

2. ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԱՐՐԵՐ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԵՐ

Անալոգային տարրերը, սարքավորումները և սարքերը, դրանց հիմնական բնութագրերը և աշխատանքի սկզբունքը: Անալոգաթվային և թվաանալոգային փոխակերպիչներ, դրանց կառուցվածքները, աշխատանքի սկզբունքները և հիմնական բնութագրերը: Իմպուլսային և օպերացիոն ուժեղարարներ՝ կառուցվածքները, աշխատանքի սկզբունքները և հիմնական բնութագրերը: Հաշվողական մեքենաների երկրորդական էլեկտրասնուցման տարրերը և սարքավորումները, դրանց առանձնահատկություններն ու բնութագրերը:

Հաշվողական տեխնիկայի տիպային տարրերը և հանգույցները, կոմբինացիոն և հիշողությամբ սխեմաներ, սարքավորումներ և սարքեր: Կոմբինացիոն հանգույցներ՝ կոդավորիչներ (շիֆրատորներ), վերծանիչներ (դեշիֆրատորներ), մուլտիպլեքսորներ, դեմուլտիպլեքսորներ, համեմատման սարքեր (կոմպարատորներ): Երկուական գումարիչներ՝ զուգահեռ (CLA) և հաջորդական (CRA) փոխանցումով: Փոխանցման պահպանումով գումարիչներ (CSA) և խմբակային կառուցվածքով գումարիչներ: Հաշվողական մեքենաների տիպային հիշողությամբ տարրերը և հանգույցները՝ տրիգերներ, ռեգիստրներ և հաշվիչներ:

Թվային սխեմաների դասակարգումը: Թվային սխեմաների ավտոմատացված նախագծման փուլերը: Թվային սխեմաների ավտոմատացված նախագծման համակարգերը: Սարքավորումների նկարագրման լեզուներ, մասնավորապես HDL (Hardware Description Language): Տրամաբանական ավտոմատացված սինթեզման հիմնական փուլերը: RTL (Register Transfer Level) – նկարագում, դրան ներկայացվող պահանջները: Թվային սարքերի նախագծման փուլերը՝ սարքավորումների նկարագրման բարձր մակարդակի լեզուների (Verilog, VHDL) կիրառմամբ:

Ծրագրավորվող տրամաբանական սարքերը, դրանց դասակարգումը և կիրառումը: Հասարակ և բարդ ծրագրավորվող տրամաբանական ինտեգրալային սխեմաներ (PLD), FPGA, կառուցվածքը, SRAM-ի վրա հիմնված FPGA, կոնֆիգուրացվող ֆունկցիոնալ բլոկներ, բուլյան ֆունկցիաների իրականացումը (LUT, մուլտիպլեքսորներ), ներկառուցված բլոկներ: FPGA կոնֆիգուրացում: FPGA կիրառման բնագավառները: FPGA-ի վրա նախագծման և սինթեզման փուլերը:

Համակարգեր բյուրեղների վրա:

Արտաքին հիշող սարքերը, դրանց դասակարգումը, հիմնական բնութագրերը և աշխատանքի սկզբունքները: Մագնիսական սկավառակներով կուտակիչները (սկավառակատարներ), դրանց աշխատանքի սկզբունքները և բնութագրերը: Նրանց զարգացման միտումները: SSD կուտակիչներ: Մուտքի/ելքի սարքերը՝ ստեղնաշարեր, մկնիկներ, տեսաձրիչներ, մոնիտորներ, դրանց դասակարգումը և կառուցվածքային առանձնահատկությունները:

3. ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ

Հաշվողական մեքենաների ճարտարապետություն և միկրոճարտարապետություն հասկացությունները: Հրամանների համակարգի ճարտարապետությունը (ISA – Instruction Set Architecture): Հաշվողական մեքենաների արտադրողականության ցուցանիշները:

Պրոցեսորների ճարտարապետությունների դասակարգումը՝ CISC, RISC, VLIW և առանձնահատկությունները: Դասակարգումը ըստ Ֆլիննի: Պրոցեսորներ, դրանց նշանակությունը, ընդհանուր կառուցվածքը և աշխատանքի կազմակերպումը: Հիմնական պրոցեսորների հրամանների համակարգի դասերը: Արտոնյալ և ընդհանուր նշանակության հրամաններ: Տվյալների և հրամանների ներկայացում, SIMD սկզբունք: Օպերանդների տեսակները: Գործողությունների դասակարգումը (տվյալների մշակման հրամաններ, հիշողությանը դիմելու հրամաններ և անցման հրամաններ, համակարգը ղեկավարող հրամաններ): Օպերանդների հասցեավորման ձևերը: Ստեկ, օգտագործումը, ստեկային հասցեավորում:

Թվաբանական-տրամաբանական սարքերը (ԹՏՍ): Ամբողջ թվերի ԹՏՍ՝ գումարման/հանման, նշանով և առանց նշանի բազմապատկման (Բուտի) և բաժանման ալգորիթմերը: Սահող ստորակետով ներկայացված թվերի ԹՏՍ և գործողությունների կատարման կազմակերպումն ու առանձնահատկությունները: Տրամաբանական գործողությունների կատարումը: Տեղաշարժի գործողությունների իրականացումը:

Օպերացիոն սարքի սինթեզը: Ղեկավարող բլոկի իրականացման ձևերը՝ ապարատային և միկրոծրագրային: Ալգորիթմի բլոկ-սխեմայից անցումը ավտոմատի:

Միկրոծրագրային կառավարող սարքի կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը: Կոմբինացիոն բազմապատկիչներ՝ մատրիցային և ծառանման: Մեքենայական ընդհատումների դասակարգումը, մշակման կազմակերպման ձևերը և մեթոդները: Ստեկի օգտագործումն ընդհատումների ժամանակ:

Պրոցեսորի ծրագրային հասանելի ռեգիստրները, դրանց տեսակները՝ ընդհանուր նշանակության, հրամանների հասցեի հաշվիչ, համակարգային դրոշակների, սեզմենտների, համակարգային հասցեական, ղեկավա-

րող ռեգիստրներ: Արտադրողականության բնութագրերը – պրոցեսորի աշխատանքի ժամանակը (CPU-time): Պրոցեսորի արտադրողականության բարձրացումը:

Հրամանների մակարդակի զուգահեռականությունը (ILP): Սուպերսկալյար մոտեցում՝ հրամանների կատարման դինամիկ պլանավորումը (dynamic scheduling), կատարման պատուհանը, ոչ կանոնավոր մշակումը: Հրամանների զուգահեռականության մակարդակի հայտնաբերում կոմպիլյատորի օգնությամբ (static scheduling – ստատիկ պլանավորում): Հրամանների կոնվեյերացում: Հրամանների կատարման փուլերը: Կոնվեյերների արտադրողականությունը: CPI (Cycles per Instruction) հասկացությունը: Կոնվեյերի հետ կապված կոնֆլիկտները՝ ըստ տվյալների, դեկավարման և կառուցվածքային: Ըստ տվյալների կոնֆլիկտների վերացում. ռեգիստրների վերանվանում, շրջանցման մեթոդը (bypassing): Ըստ դեկավարման կոնֆլիկտների հարթման մեթոդները:

Անցումների ստատիկ և դինամիկ կանխատեսումը: Անցումների կանխատեսման սխեմաները՝ Սմիթի, կորելացիոն, հիբրիդային պրեդիկտորներ, պերսպեկտիվ օգտագործումը անցումների կանխատեսման համար: Ճյուղավորումների կանխատեսման բուֆերի (BTB) կառուցվածքը:

Ապարատային ապահովումը ILP ավելի բարձր աստիճանի համար, չկարգավորված հրամանների մշակումը՝ վերակարգավորման բուֆեր: Կոնֆլիկտների վերացումը ծրագրային միջոցներով՝ պրեդիկացիա:

Հիշողության հիերարխիկ կառուցվածքը: Հիշող սարքերի տիպերը և դրանց բնութագրերը: Հիշող սարքերի դասակարգումը. ըստ ինֆորմացիայի պահման ֆիզիկական սկզբունքի, ըստ ինֆորմացիային դիմելու եղանակի: Ստատիկ և դինամիկ հիշողություններ (SRAM, DRAM), դրանց բնութագրերը, կազմակերպումը, կիրառումը: Դինամիկ սինքրոն հիշող սարքեր (DDR SDRAM), գործառության սկզբունքը, զարգացման հեռանկարները: Ասոցիատիվ հիշողություն՝ կազմակերպման եղանակ-

ները և կիրառումը: FIFO բուֆերը: Քեշ հիշողության հիմնավորումը, տեղայնության սկզբունքները: Քեշ հիշողության կազմակերպման մեթոդները՝ ուղիղ արտապատկերմամբ, լրիվ-ասոցիատիվ, մասնակի-ասոցիատիվ: Քեշ հիշողությունում գրանցման եղանակները՝ միջանցիկ (write through) և հետադարձ (write back): Քեշ արտադրողականություն, քեշ վրիպումների քանակի նվազեցում: Բազմամակարդակ քեշ հիշողության կազմակերպումը: Բացառիկ (exclusive) և ներառական (inclusive) քեշ: Օպերացիոն համակարգի (OS-Operating System) ֆունկցիաներ՝ OS կառուցվածքը, OS-Kernel ֆունկցիաներ, ֆայլային համակարգ: Գործընթացի հասկացություն: Անցումը (փոխանջատում) օգտագործողի և Kernel ռեժիմների միջև:

Ընդհատումների դասակարգում և մշակում: Պրոցեսորի և ծրագրային ապահովման գործողություններ: HW և SW փոխգործակցություն:

Վիրտուալ հիշողությունը: Վիրտուալ հիշողության էջային կազմակերպումը, էջերի աղյուսակի ֆորմատը: Հասցեի արագ ձևափոխման բուֆերը (TLB): Վիրտուալ հիշողության սեգմենտային կազմակերպումը: Հիշողության պաշտպանության եղանակները: Մշտական հիշող սարքերը (ROM), դրանց դասակարգումը, կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը և կիրառումը: Արտադրողի կողմից ծրագրավորող (դիմակային) ROM, միանգամյա ծրագրավորվող (PROM), վերածրագրավորվող (EPROM, EEPROM): Flash հիշողության նշանակությունը, կազմակերպումը, բնութագրերը և աշխատանքի սկզբունքը: Կիսահաղորդչային հիշողության զարգացման միտումները:

Հաշվողական մեքենաների մուտք/ելքի համակարգերը: Մուտք/ելքի կազմակերպման ձևերը և միջոցները: Հաշվողական համակարգերի շինաների (դող) կազմակերպում: Շինաների տեսակներ՝ համակարգային շինաներ, պրոցեսոր-հիշողություն շինաներ, մուտք/ելքի շինաներ: Համակար-

գային շինայի կառուցվածքը: Շինաների ֆիզիկական իրագործումը՝ մեխանիկական և էլեկտրական տեսանկյունից: Տրանզակցիաներ շինաներում: Ընդգծված և մուլտիպլեքսված գծեր: Շինաների արբիտրաժ: Չիպսետներ (chipsets), դրանց նշանակումը և կառուցվածքը: Մուտք/ելքի սարքերի կառուցվածքը: Կոնտրոլերի ֆունկցիաները: Մուտք/ելքի սարքերի միացում (հիշողության մեջ արտապատկերված մուտք/ելք): Առանձնացված մուտք/ելք: Մուտք/ելքի գործողությունների կատարման մեթոդները՝ ծրագրային ղեկավարմամբ, ընդհատումով, ուղիղ դիմում հիշողությանը՝ DMA: Հաշվողական մեքենաների մուտք/ելքի կապուղիները, աշխատանքի կազմակերպումը և բնութագրերը:

Քոմպիյութերների դասակարգումը՝ անհատական, աշխատանքային կայաններ (work stations), մեյնֆրեյմներ, սուպերքոմպիյութերներ, սերվերներ, միկրոկոնտրոլերներ, ներկառուցված համակարգեր, դրանց հիմնական բնութագրերը: IA-64 պրոցեսորի ճարտարապետությունը: EPIC- ճարտարապետություն: VLIW-հրամանները, պրեդիկացիան, ցիկլերի ծրագրային կոնվեյերացումը, տվյալների նախնական բեռնավորումը: Մասնագիտացված պրոցեսորներ և համապրոցեսորներ (co-processors)՝ ցանցային, մուլտիմեդիային, ազդանշանների թվային մշակման (DSP), դրանց կազմակերպումը, բնութագրերը և զարգացման հեռանկարները: Մեյնֆրեյմների (Mainframes) ճարտարապետությունը, աշխատանքի սկզբունքը, հուսալիությունը, RAID-զանգվածները: Դրանց մուտք/ելքի պրոցեսորները: Սուպերքոմպիյութերների ճարտարապետությունը, աշխատանքի կազմակերպման սկզբունքը, ինտենսիվ հաշվարկների իրականացումը: Վեկտորային մշակումը:

Սերվերների ապարատային կոնֆիգուրացիան, աշխատանքի կազմակերպման սկզբունքը, հուսալիության բարձրացման եղանակները՝ պահեստավորումը: Վիրտուալ մեքենաները: Վիրտուալացման սկզբունքները: Տվյալների հոսքով կառավարվող պրոցեսորները (Data-flow): Օպե-

րանդների հոսքի գրաֆը: Հոսքային հաշվողական համակարգի կառուցվածքը:

4. ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Ժամանակակից հաշվողական համալիրների և համակարգերի բնութագրերը, համեմատական գին/արտադրողականություն հարաբերակցությունը, հուսալիությունը, կայունությունը, մասշտաբավորումը, ծրագրային ապահովման համատեղելիությունը և շարժունակությունը: Հաշվողական համալիրների և համակարգերի ապարատային ու ծրագրային միջոցները: Ժամանակի տարանջատման ռեժիմում աշխատող համակարգեր: Տեխնոլոգիական պրոցեսների կառավարման հաշվողական համալիրների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքները:

Զուգահեռ համակարգերի դասակարգումն ըստ Ֆլինի՝ SISD, SIMD, MISD, MIMD: Ամրալի և Գուստավսոնի օրենքները: Հաշվողական համակարգերի զուգահեռականության մակարդակները: Բազմահոսքային պրոցեսորները (Multithreading): SIMD համակարգերը՝ վեկտորային և մատրիցային պրոցեսորներ: MIMD համակարգերը: Ընդհանուր հիշողությամբ մուլտիպրոցեսորները: Հիշողությանը համասեռ դիմումով մուլտիպրոցեսորները (UMA): Հիշողությանը ոչ համասեռ հասանելիությամբ համակարգեր (NUMA): SMP և NUMA համակարգերի կառուցվածքը և բնութագրերը: CC-NUMA տեսակի համակարգերի կազմակերպում: Քեշ-հիշողության կոհերենտության խնդիրները (ծրագրային և ապարատային մեթոդներ): Հետևման արձանագրությունները (Snoopy Protocols - MESI, MESIF). Բազմամիջուկ (Multicore) և բազմահոսքային պրոցեսորները (Chip MultiThreading - CMT): Հիպերթերդինգ և մուլտիթերդինգ: Ժամանակակից բազմամիջուկ պրոցեսորների բնութագրերը, Intel Core (core i3, i5, i7) պրոցեսորներ:

Բաշխված հիշողության մուլտիպրոցեսորներ: Կլաստերներ: Կլաստերների կառուցվածքը, կլաստերային համակարգերի տոպոլոգիաները, աշ-

խատանքի սկզբունքները, հաշվարկների իրականացումը և արդյունավետությունը: Մասշտաբավորում: Կլաստերների առավելություններն ու թերությունները: Google cluster: Հարցման և մշակման մեխանիզմը: Տվյալների կենտրոններ (Data Centers), Warehouse-Scale Computing (WSC): Զանգվածային զուգահեռականության համակարգեր (MPP): Grid-համակարգեր, դրանց կիրառումը և տեսակները:

5. ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ, ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀՍԿՈՒՄ, ԱՐԱՏՈՐՈՇՈՒՄ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅՈՒՆ

Տեխնիկական համակարգերի շահագործման հուսալիության, տեխնիկական արատորոշման, մոնիտորինգի և սպասարկման հասկացությունները, հիմնախնդիրները, դրանց կազմակերպման եղանակներն ու միջոցները: Հուսալիության և արդյունավետության չափանիշները և բնութագրերը: Հուսալիության բարձրացման մեթոդները: Լրացուցիչ, օպտիմալ պահեստավորում: Բարդ պահեստավորված համակարգերի հուսալիության գնահատումը:

Սարքավորումների և սարքերի հսկման, արատորոշման կազմակերպման ապարատային և ծրագրատրամաբանական մեթոդները, միջոցներն ու եղանակները: Միկրոարատորոշման սկզբունքները: Հսկման և արատորոշման մաթեմատիկական մոդելը: Դինամիկ արատորոշման և կարգաբերման ծրագրերը: Անսարքությունների և արատորոշման աղյուսակները, պարզեցումները և դրանց կիրառմամբ հսկման և արատորոշման թեստերի որոշման եղանակները:

Հաշվողական մեքենաների, համալիրների և համակարգերի ապարատային հսկումը, ըստ մոդուլի հսկման մաթեմատիկական հիմնավորումը, հսկման եղանակները և մասնավոր դեպքերը: Ըստ մոդուլի հսկման տեխնիկական իրականացումները՝ ըստ տրված մոդուլի գումարիչներ:

Սխալների հայտնաբերման և արատորոշման կողերը: Կողային հեռավորությունը, սխալների հայտնաբերման և ուղղման կողերի կիրառմամբ ապարատային արատորոշումը (Հեմինգի կոդ):

Սարքավորումների, սարքերի և հանգույցների թեստային հսկման եղանակները: Տրամաբանական սխեմաների հսկման թեստերի գեներացման մեթոդները (Արմատրոնգի և Ռոտի մեթոդներ):

Տեղեկատվության փոխանակման և թվաբանական գործողությունների կատարման ապարատածրագրային հսկումը և արատորոշումը:

Ցանցի մշտադիտարկման (մոնիտորինգի) խնդիրները, հնարավորությունները, առանձնահատկությունները, դերը և նշանակությունը: Ցանցի մշտադիտարկման ապարատածրագրային միջոցները, սկաներներ, հսկիչներ: Անլար ցանցի հսկում: Ցանցի թրաֆիկի հսկողություն, թրաֆիկի միջակայքի հսկում: Աուտենտիֆիկացիա, տազնապների մշտադիտարկում: Էլեկտրոնային փոստի և պրոֆիլների հսկողություն, անվտանգության կառավարում: Կայքերի հսկում, հաղորդագրությունների և սոցիալական ցանցերի մոնիտորինգ:

6. ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ

Հաշվողական (քոմպյութերային) ցանցերի կազմակերպման տիպերը, դասակարգումն ու տոպոլոգիաները: Կլիենտ-սերվեր և միատարր համակարգերի հիմնական բնութագրերը և տարբերությունները: Կլիենտ-սերվեր համակարգի կողմից ապարատային և ծրագրային միջոցների նկատմամբ ներկայացվող պահանջները: Հաշվողական ցանցերի հիմնական ապարատածրագրային միջոցները՝ կոնցենտրատորներ (Hubs), կոմուտատորներ (Switches), երթուղավորիչներ (Routers), կամուրջներ (Bridges) և շլուզներ (Gateways), նրանց կառուցվածքը, աշխատանքի սկզբունքները և բնութագրերը:

Հաշվողական ցանցի կառավարման OSI մոդելը և արձանագրություններն ըստ մակարդակների: TCP/IP արձանագրությունների ընտանիքը: Հասցեավորումը ցանցում, IPv4 և IPv6 հասցեների դասերը և դիմակները, ARP արձանագրության նկարագրումը: Անդաս հասցեավորումը (CIDR) և դիմակի միջոցով ցանցի տրոհումը ենթացանցերի: Լոկալ ցանցերի ստանդարտ տեխնոլոգիաները (Ethernet, Fast Ethernet, FDDI), դրանց պարամետրերը և միջավայրի հասանելիության մեթոդները: X25, SDH, Frame Relay, ATM և այլ հաշվողական ցանցերը, դրանց կառուցվածքներն ու կազմակերպման եղանակները:

ATM կոմուտատորները: Տվյալների հոսքերի կառավարումը ATM ցանցերում: Switch 2 layer, Switch 2+ layer, Switch 3 layer տեխնիկական պարամետրերի տարբերությունն ու կիրառման նպատակները: Router երթուղավորիչի տեխնիկական պարամետրերը, կազմակերպման առանձնահատկությունները և աղյուսակը: Երթուղավորման մեթոդները:

Լոկալ վիրտուալ ցանցերը (VLAN), կազմակերպման միջոցները: Մասնավոր վիրտուալ ցանցերը (VPN), կազմակերպման եղանակները: Թունելներ, դրանց նշանակությունը:

Ինտերնետը որպես գլոբալ ցանց, դրա աշխատանքի կազմակերպման իրականացումը: Մասնագիտացված ինտերնետ ծառայություններ:

Ցանցային հիմնական ծառայություններ՝ DHCP, WINS և DNS: Դոմենային անունների համակարգը (DNS) և հարցումների տեսակները: WEB ծառայություն, էլեկտրոնային փոստ, FTP ծառայություն՝ FTP, TFTP, SFTP և FTPS արձանագրությունների նկարագրումը:

Կորպորատիվ հաշվողական ցանցերը, դրանց կառուցվածքն ու առանձնահատկությունները: Ամպային տեխնոլոգիաների կիրառումը կորպորատիվ ցանցերի կազմակերպման գործում: Շարժական, բջջային և արբանյակային ցանցերը, բջջային ցանցի զարգացումը, առանձնահատկությունները և ինտեգրումը:

SNMP և CMIP արձանագրությունները: SNMP MIB -ի ձևաչաձեռը և օբյեկտների անունները: MPLS տվյալների հաղորդման տեխնոլոգիան: Անլար կապի (WiFi, WiMAX) կազմակերպման ստանդարտները, տեսակները, արձանագրությունները, առանձնահատկությունները և անվտանգությունը:

Տարատեսակ հաշվողական ցանցերի միավորումը, դրանց փոխգործունեությունը և աշխատանքի կազմակերպումը:

Հաշվողական ցանցերում ինֆորմացիայի անվտանգության ապահովման մեթոդները: Պաշտպանիչ էկրանի (Firewall) դերը, Proxy սերվերները, դրանց աշխատանքի կազմակերպումը:

Ամպային (Cloud) տեխնոլոգիաներ, հասկացությունները և տեսակները: Cloud-ի կազմակերպման օրինակներ և սերվերներ: Microsoft-ի cloud սերվերները, Azure ծառայությունը: IBM սերվերները, առանձնահատկությունները և հնարավորությունները (IBM Watson ծառայությունը):

